«Քաղաքացիական կացության ակտերի մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ ՀՕ-9-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 47-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «բացառությամբ» բառից հետո լրացնել «Ընտանեկան օրենսգրքի 128-րդ հոդվածի 3-րդ մասով և » բառերը.

2) 1-ին մասից հանել «և սույն հոդվածի 2-րդ մասով» բառերը:

Հոդված 2. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: